2022-2023 թթ. ուստարում պատմաշխարհագրական առարկայական մեթոդական միավորման կատարած տարեկան աշխատանքների հաշվետվություն

Պատմաշխարհագրական առարկայական մեթոդական միավորման աշխատանքները սկսվել են օգոստոս ամսին եւ աշխատանքների սկիզբը կարելի է համարել օգոստոսին կայացած մ/մ առաջին նիստը: Մեթոդական միավորումը կազմված է 3

(1-ին կիսամյակ) եւ 4 (2-րդ կիսամյակ) անդամներից:

Հաշվետվության նպատակն է.

- Կատարել մ/մ աշխատանքների վերլուծություն
- Գնահատել մ/մ աշխատանքների արդյունավետությունը
- Կարեւորել մ/մ գործունեությունը

2022-2023 ուստարվա պատմաշխարհագրական մեթոդմիավորումը ձեւավորվել է աշխարհագրություն, պատմություն, հասարակագիտություն, հայ եկեղեցու պատմություն եւ հայրենագիտություն առարկաները դասավանդող ուսուցիչների միավորմամբ:

Ուսուցիչ	Կրթություն	Ծանրաբեռնվածություն	Դասարան
Մ. Ղուկասյան	բ-ն	16/18	5 ա,բ, 6ա,բ, 7ա,բ 8ա,բ 9 ա
Ն. Միրզոյան	բ-ն	12	5 ա,բ, 6բ, 7բ, 8ա,բ, 9 ա
Քն. Կարապետյան	բ-ն	16	6ա, 7ա, 8ա, հեռավար
Հ. Ղազարյան	բ-ն	4/12	8 բ, հեռավա

Մ/մ կողմից դրված նպատակներ եւ խնդիրներ ուստարվա ընթացքում

- Ստեղծել պայմաններ կրթության որակի բարձրացման ուղղությամբ
- Կատարել կրթամեթոդական եւ գործնական աշխատանքների արդյունքների վերլուծություն հիմնական դպրոցում
- ՏՀՏ- ի կիրառումը

Այս ուստարում գումարվել են թվով …. հերթական նիստեր եւ կազմվել է թվով …. արձանագրություն: Քննարկվել են հետեւյալ հարցերը.
Սեպտեմբեր եւ հունվար ամիսներին 1-ին եւ 2-րդ կիսամյակների հանրակրթական առարկայական չափորոշիչներին եւ ծրագրերին համապատասխան կազմվել, քննարկվել եւ հաստավել են թեմատիկ պլանները: Առարկաների դասավանդման ժամանակ առաջնությունը տրվել է գործնական կիրառությանը, խոսելու, լսելու, կարդալու եւ ՏՀՏ-ից օգտվելու կարողունակությունների զարգացմանը:
Վերոնշյալ առարկաների դասավանդման հիմնական նպատակներից է սովորողներին ոչ միայն զուտ պատմաշխարհագրական երեւույթներին, պատմական իրադարձություններին ծանոթացնելը, այլեւ անհատի հոգեւոր եւ մտավոր զարգացմանը, անձի արժեքային համակարգի, պատմական եւ աշխարհագրական մտածողության ձեւավորմանը նպաստելը:
Հմտությունների ձեւավորմանը զուգահեռ աշխատանք է տարվում դրանց ինքնուրույն եւ գործնական կիրառության համար, ինչպես նաեւ ազգային եւ համամարդկային արժեքների նախնական հաղորդակցման համար:
Ուսումնական տարվա ընթացքում պարբերաբար անդրադարձ է կատարվում թեմատիկ պալանների, թեմատիկ գրավոր աշխատանքների ընթացքին եւ կատարողականին:
Առաջին կիսամյակում մ/մ աշխատանքային պլանով նախատեսված աշխատանքները բոլորը կատարվել են եւ ներկայացվել են մանկավարժական խորհդում՝ արդյունքների ամփոփման ժամանակ:
Այսօր ես կներկայացնեմ մ/մ 2-րդ կիսամյակի կատարված աշխատանքները:
2-րդ կիսամյակը մ/մ համար շատ բուռն է եղել, նախատեսված աշխատանքները շատ են եղել եւ բոլորն էլ պլանավորված կատարվել են:
Նշեմ նաեւ, որ մ/մ համալրվել է պատմության նոր ուսուցչով՝ Հ. Ղազարյանն է, ում մ/մ ընդունեց մեծ սիրով, ցուցաբերեգ աջակցություն, վերջինս էլ շատ արագ ինտեգրվեց:
Այս տարի ուսուցիչների պարտադիր ատեստավորմանը մասնակցելու է պատմության ուսուցչուհի Քն. Կարապետյանը, ում ջանքերով ի դեպ փետրվար ամսին կայացած Հայոց Եկեղեցի առարկայից օլիմպիադայի մարզային փուլին մասնակցել է 8բ դասարանի աշակերտուհի Անգելինա Պողոսյանը եւ պարգեւվատրվել է 2-րդ կարգի դիպլոմով, որից հետո մարտ ամսին կայացած դպրոցական օլիմիադայի հանրապետական փուլում ՀԵՊ-ից ստացել է 3-րդ կարգի դիպլոմ: Ազգային մշակույթի արժեքներին ծանոթանալու նպատակով, ուսուցչուհի Մ. Ղուկասյանի նախաձեռնությամբ 5բ դասարանի հետ այցելություն ենք ունեցել ,, Ժողովրդական արվեստի թանգարան,,:
Ինչպես գիտենք մարտի 20-ին Ֆրանկոֆոն երկրների օրն է, որին ՀՀ-ն անդամագեվել է 2012թ-ին: Այդ օրվա խորհրդին նվիրված մարտի 22-ին

դաս-միջոցառում անցկացվեց Նոր-Նորքի Հ. Սահյանի անվան գրադարանում: Մասնակցեցին 30 աշակերտներ՝ տարբեր դասարաններից: Տրվեց Ֆրանսիայի երկրագրական բնութագիրը, ներկայացվեգին հայ-ֆրանսիական հարաբերությունները, մշակույթը, ազգային ավանդույթները եւ այլն: Միջոցառումը անցկագվեգ բարձր մակարդակով, պարգեւատրվեցինք պատվոգրով (ուս. Մ. Ղուկասյան): Մարտի 24-ին ՀԵՊ առարկայից պատմության ուսուցչուհի Ն. Միրզոյանը կազմակերպեց դաս-միջոցարում 5ա, բ, 6բ դասարանի աշակերտների հետ, միջոցառումը նվիրված էր ,,Մեծ պահքի կիրակիներին,,: Աշխատանքի հիմնական նպատակը պահքի կիրակիներից յուրաքանչյուրի խորհուրդները պարզաբանելն էր: Շատ հետաքրքիր ու բովանդակալից միջոցառում էր, հագեցած դիդակտիկ պարագաներով եւ գեղեցիկ բեմադրություններով: Ապրիլ ամսին Ն. Միրզոյանը 7բ դասարանի հետ այցելություն է ունեցել մատենադարան: Ապրիլի 19-ին աշխարհագրություն առարկայից 8բ դասարանի հետ անցկացվեց դաս- միջոցառում ,,Չինաստան,, թեմայով: Թեման մեր դպրոցի համար ակտուալ է, ունեինք հյուրեր: Չինաստանի երկրագրական բնութագրից բացի, անդրադարձ կատարվեց հայ-չինական կապին, մշակույթին, խոհանոցին, ավանդույթներին: Ուշադրություն էր դարձվել բանավոր խոսքին, աշակերտները իրենց հմտությունները եւ կարողունակությունները արտահայտեցին խմբային աշխատանքներում, ունեին պատրաստած գեղեցիկ պաստառներ, դասը շատ հագեցած էր դիդակտիկ պարագաներով: Աշխատանքը բարձր գնահատվեց ունկնդիրների կողմից:
Ապրիլի 25-ին Քն. Կարապետյանը ցեղասպանության հետ կապված 8ա դասարանում ,,Հայ վրիժառուներ,, թեմայով բաց դաս անցկացրեց, որտեղ հիշվեց եւ արժեվորվեց նրանց կատարած դերը Մեծ Եղեռնի օրերին: Շատ հետաքրքիր էր աշակերտների կողմից պատրաստված օրացույցը:
Քն. Կարապետյանը բաց դաս անգկացրեց նաեւ մայիսի 6-ին՝ 6ա դասարանի հետ՝ ,,Արտաշեսյաններ,, թեմայով: Մայիսի 18-ին ,,Բագրատունյաց արքայատոհմ,, թեմայով 7բ դասարանում բաց դաս անցկացրեց Ն. Միրզոյանը: Երկուսում էլ նպատակային էին ներկայացնել եւ արժեւվորել հայտնի արքայատոհմերի դերը հայապահպանության գործում:
Հեղինե Ղազարյանը յուրաքանչյուր թեմայի ավարտին ամփոփումը կատարում էր խմբային աշխատանքով, որի ժամանակ ներկայացվում էին հետաքրքիր պաստառներ եւ դիդակտիկ նյութեր:
Թեմատիկ պլանի կատարողականը նորմալ է, թերացումներ չկան: Էլեկտրոնային մատյանում գրանցումները ժամանակին կատարվել են: 2-րդ կիսամյակի արդյունքները ամփոփված են. 9-րդ դասարանում ,,Հայոց պատմություն,, առարկան պետական ավարտական բանավոր քննություն է, իսկ ,,Աշխարհագեություն,,-ը՝ ընտրովի է բնագիտական առարկաների հետ (թեստ): Նախաքննական կրկնությունները կատարված են:

Ես ուզում եմ ասել, որ մեր մեթոդական միավորումը այս ուսումնական տարում աշխատել է շատ ոգեւվորված, աշխատել ենք համախմբված, միմյանց աջակցելով, մեր առջեւ ունենալով մեկ կարեւոր նպատակ՝ ամեն կերպ նպաստել սովորողների կրթությանն ու դաստիարակությանը: Իհարկե միշտ ունենալով նորարար տնօրենի աջակցությունը:
Մ/մ- ում տիրում է նորմալ բարոյահոգեբանական մթնոլորտ, մասնակցում ենք Նոր Չափորոշիչների վերապատրաստմանը: